Դաս 15. Ավանդապատումներ՝ տեղանքի հետ կապված (Ծիծեռնակաբերդ, Հաղպատ, Ջանգեզուր, Ծաղկաձոր)

Լրացուցիչ նյութ

Բյուրականի լեգենդը

Հետաքրքիր է նաև Բյուրականի մասին լեգենդը: Բյուրականում ապրելիս են եղել մի որսորդ ու մի հովվուհի: Մի օր որսորդը մի կաքավ է որսում և նվիրում հովվուհուն: Վերջինս փորձում է աղբյուրներից մեկում լվանալ կաքավի վիրավոր կուրծքը: Այդ պահին կաքավը կյանք է առնում և թռչում գնում: Որսորդը, իմանալով այդ մասին, հարցնում է հովվուհուն, թե ո՞րն է այդ աղբյուրը: Շվարած հովվուհին, չկարողանալով գտնել հրաշալի աղբյուրը, բացականչում է. «Բյուրակն է, հազարակն է, ի՞նչ գիտեմ, թե ո՛ր ակն է»: Ըստ ավանդության՝ այդ պատճառով էլ լեռները կոչվել են Բյուրակն:

Ավանդություն Սելիմի լեռնանցքի մասին

Ավանդությունը պատմում է, որ քուրդ առաջնորդ Սուլեմայի դուստր սիրահարված է եղել Գեղարքունյաց աշխարհի գեղեցկուհիներից մեկին և միշտ այցելել է նրան:

Մի անգամ էլ ձմռանը ճանապարհը դժվարանցանելի է եղել, հազիվ ճանապարհի կեսն անցած՝ գիշերը վրա է հասել, նա կորցրել է ճանապարհն ու խեղդվել ձյունաբքի մեջ: Ասում են՝ քուրդ առաջնորդն իր դստեր հիշատակի համար կառուցել է մի իջևանատուն, որտեղ ճանապարհորդները կարողանան հանգստանալ ու շարունակել ճանապարհը: Լեռնանցքն այդ ժամանակից կոչվում է Սելիմի լեռնանցք: Հենց այդ վայրում էլ կառուցվել է այժմյան քարավանատունը: